

===== Բ Ա Ն Վ Ո Ր Ի =====
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԳՐԱԴԱՐԱՆ № 3



Ա. ԳԻՆԴԻՆ

Բ Ա Ն Վ Ո Ր,
ԱՄՐԱՅՐՈՒ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻ
ՖԻՆԱՆՍՆԵՐԸ

ՀԱՅԿՈՈՊԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ 1929



ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ,
ՄԱՐՔՍԻ ՓՈՂ. № 29
ԳՐԱՌԵՊ. № 2044բ.
ՏԻՐԱԺ 3000

Յերկրի արտադրական ուժերի
դարգացման շահը պահանջում ե
միջոցների այնպիսի բաշխում,
վորով այդ միջոցների հնարավոր
մեծ մասը դրվեր արտադրության
մեջ, իսկ հնարավոր փոքր մասը
քներ ապրանքատար ցանցի մեջ:
(ՀԿ(Բ)Ն 15-րդ համագու-
մարի բանաձևից)

... Դենել նպատակ՝ յուրաքան-
չյուր տարի անշեղ կերպով բար-
ձրացնել փայն այնքան, մինչև
վոր գոյանան, բացառապես կո-
ոպերատիվ սեփական միջոցներով
աշխատելու համար, անհրաժեշտ
դրամագլուխներ:

(Յենտորոտայուվի 14-րդ լիազորա-
կան ժողովի վորոշումներից)

ԻՆՉՈ՞Ւ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻՆ

ՀԱՐԿԱՎՈՐ ԵՆ ՄԵԾ ՄԻՋՈՑՆԵՐ

Խորհրդային իշխանության պայմաններում,
պետության աջակցության շնորհիվ, բանվորա-
կան կոոպերացիան տարեց-տարի աճում ե և ամ-
բանում: Նա իր աշխատանքի համարյա բոլոր
ապարեզներում ունի խոշոր նվաճումներ:

Բանվորական կոոպերացիան առանձնապես մեծ առաջադիմություն ունեցավ իր ապրանքային շրջանառություն ասպարեիցում, վորը 1927-28 թվին հասավ մինչև 3 միլիարդ և 400 միլիոն ռուբլու:

Բանվորական կոոպերացիայի առևտրական և տնտեսական գործունեությունն այնքան է մեծացել, վոր այժմ ընդգրկում է բանվոր դասակարգի սպառողական վողջ կարիքների համարյա յերկու յերրորդական մասը: Քաղաքներում և գործարանային վայրերում կոոպերացիան հանդիսանում է համարյա միակ մանրավաճառ առևտրական կազմակերպությունը:

Կոոպերացիայի զարգացման առաջիկա հինգամյա պլանը (1928—33 թ.) նախատեսում է հնգամյակի վերջում ապրանքային շրջանառություն աճումը համարյա կրկնակի չափով: Միմիայն ներկա 1928—29 թվին ապրանքային շրջանառությունը մեծանում է 1 միլիարդ ռուբլիով:

Այսպես են բանվորական կոոպերացիայի տնտեսական գործունեության արդյունքներն ու հեռանկարները, սակայն այս առաջադիմությունը չի համապատասխանում աշխատանքի վորակը:

Բանվորական կոոպերացիայի գործունեություն

թյան զլխավոր բացերից մեկը հանդիսանում է գյուղատնտեսական մթերքների աշխատանքի անբավարար լինելը:

Այս աշխատանքն ընդարձակել բանվորական կոոպերացիան չկարողացավ այն պատճառով, վոր գյուղատնտեսական մթերքների պատրաստումը պահանջում էր մեծ միջոցներ, — մթերքները հարկավոր էր դնել բացառապես կանխիկ դրամով աշնանը և պահել ամբողջ տարի: Հարկավոր էյին այդ բանի համար հատուկ պահեստներ: Իսկ այդպիսի պահեստներ մեր կոոպերատիվներից չատերը չունեյին:

Բայց կարելի՞ չէ հաշտվել այն բանի հետ, վոր ամենորյա մասսայական սպառման հիմնական մթերքները՝ միս, բանջարեղեն, կաթ, ձու, կոոպերատիվում չեն գտնվում և բանվորները հարկադրված են լինում դիմել մասնավորին և վճարել կրկնակի գին: Ինչպես, վոչ: Բանվորական կոոպերացիան պետք է միջոցներ ձեռք առներ կանոնավորելու այդ կարևոր ճյուղը:

Անցյալ 1927—28 թվին բանվորական կոոպերացիան ընդարձակեց գյուղատնտեսական մթերքների աշխատանքը և ունեցավ հաջողություն: Սակայն միջոցների պակասությունը և համապատասխան շենքերի ու պահեստների բացակայությունը խանգարում են այժմ ել բանվոր-

բական կոոպերացիային ընդարձակելու այդ աշխատանքը: Բանվորական կոոպերացիայի առաջ ցցվում է հրամայական խնդիր՝ գտնել միջոցներ այդ աշխատանքն ընդարձակելու համար:

Ներկայումս սպառողական կոոպերացիան և, մասնավորապես նրա բանվորական մասը, Խորհրդային Միության վողջ ժողովրդական տնտեսության հետ միասին թեկնդիվել է իր տեխնիկական բազայի վերակառուցման շրջանը: Այսպիսով նրա առաջ սուր կերպով դրված է առևտրական ցանցի և այլ ձեռնարկությունների համար նոր կապիտալի ներդրումների խնդիրը:

Բանվորական կոոպերացիայի ներկայումս ունեցած խանութային ցանցը գլխավորապես մնացել է անցյալից: Նա անգործ է սպասարկելու աճող շրջանառությանը: Գոյություն ունեցող հերթերն ապացուցում են առևտրական ցանցի անբավարար լինելը, բացի այդ՝ խանութների մեծագույն մասը գտնվում է քաղաքների կենտրոնում, իսկ ծայրամասերում, ուր ապրում են բանվոր ազգաբնակչության գլխավոր մասսան, խանութներ քիչ կան: Այս բոլորը պահանջում են ընդարձակել բավականաչափ ցանցը՝ կառուցելով նոր մագաղիներ, խանութներ, և առաջին հերթին բանվորական ծայրամասերում:

Այս խնդիրն իրականացնելու համար ան-

հրաժեշտ եւ ահադին միջոցներ, վորը բանվորական կոոպերացիան չունի:

Ծագում եւ անհետաձգելի անհրաժեշտությունն առևտրական ցանցը մոտեցնելու սպառողին՝ գլխավորապես ծածկելու այն բացը, վոր առաջացել եւ շուկայում մասնավոր ձեռնարկությունների լիկվիդացիայի հետևանքով: 1926—27 թվին մասնավորները փակեւ են 103,000 առևտրական կետեր: Իսկ կոոպերացիան դրանց փոխարեն բացել եւ ընդամենը 4.000, եւ թեև նա այդ 4.000 խանութների ապրանք բաց թողնելու ունակությամբ փոխարինել եւ փակված մասնավոր խանութներին, սակայն, անշուշտ, բավականաչափ վատացել եւ սպառողի սպասարկման վորակը, ըստ վորում մեծանալով մեկ խանութի գնորդների քանակն, անշուշտ պիտի աճեյին հերթերը: Ուստի բանվորական կոոպերացիան այժմ, թեկուզ վորպես ժամանակավոր միջոց, հարկադրված եւ զբաղվել պալատականների եւ կրպակների ցանցի կառուցումով, նույնպես ընդարձակելու շրջիկ առևտուրը (սայլակներով): Յեվ այս կառուցումների համար նույնպես պահանջվում եւ շատ միջոցներ:

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը նախատեսում եւ նոր ֆաբրիկաների եւ գործարանների խոշոր աճում, վո-

րոնք ընդունելու յեն իրենց մեջ նոր բանվորական մասսաներ:

Բանվորական կոոպերացիան պետք է կազմակերպի, միանգամայն ամայի տեղում, այդ բանվորների սպասարկումը, և այս հանգամանքը կսահանջի համապատասխան խանութային ցանցի կառուցումը և նոր միջոցների գործադրումը:

Եւթ դրության մեջ չե նաև պահեստային տնտեսությունը: Պահեստները մեծ մասամբ փոքր են և տեխնիկապես անհամապատասխան: Շատ բանկոոպներ, փոխանակ ունենալու մեկ ընդհանուր կենտրոնական պահեստ, ունեն մի-միանցից հեռու ընկած մի շարք պահեստային շենքեր, վորոնք միանգամայն անպետք են ապրանքներ պահելու համար: Պահեստային տնտեսության այսպիսի վիճակը հիվանդագին կերպով անդրադառնում է կոոպերատիվի աշխատանքների վրա, պատճառ է դառնում ապրանքների հաճախակի փչացման, նույնպես ապրանքների տեղափոխության ավելորդ ծախսերի, վորոնք վերջին հաշվով ընկնում են սպառողների վրա:

Վորպեսզի խուսափեն վոչարտագրական այս ծախսերից, մի շարք բանկոոպներ ձեռնարկեցին կառուցելու յերկաթուղու կայարաններին կից պահեստներ, միացնելով դրանց քաղաքի հետ

յերկաթուղու հատուկ գծով: Մի քանի բան-
կոռայներ այդ պահեստները մեքենայացրել են,
կառուցելով բարձրացնող մեքենաներ, վագո-
նետիկաներ, և արտասահմանի ձևով կշռող ու
բեռկապախն մեքենաներ (լենինգրադ, Մոսկվա,
Խարկով): Այդպիսի պահեստները հանդիսանում
են շատ հարմար ու շահավետ, բայց միաժամա-
նակ և մեծ գումար պահանջող: Իսկ այդպիսի
գումարից շատ կոռպերատիվներ գուրկ են
միանգամայն: Սակայն պետք է ընդգծել, վոր
ի նկատի ունենալով հանդերձ բանվորական
կոռպերատիվներին առաջադրած տնտեսական
աշխատանքների ծավալն ու նույնպես իրենց
ծախսերի հետագա կրճատումը, այնուամենայ-
նիվ բանվորական կոռպերատիվները պետք է
փնտռեն միջոցներ այդ կառուցումների համար:

Բանվոր դասակարգի պահանջների առավե-
լագույն բավարարման և բանվորական կենցա-
ղի վերակառուցման խնդիրը պահանջում է բան-
վորական կոռպերատիվներից առանձին ուշա-
դրություն դարձնել կոռպերատիվ աշխատանքի
այն տեսակների զարգացման վրա, ինչպիսիք են
հասարակական սնունդը և հացագործությունը:

Մինչև այժմ էլ բանվորական կոռպերացիան
այդ ասպարիզում թույլ աշխատանք է տանում:
Որինակի համար վերցնենք ճաշարանները: Ռու-

սաստանի 160 խոշոր կենտրոնական բանկոտպ-
ներից ճաշարաններ ունեն ընդամենը 100 կազ-
մակերպութիւն. ըստ վորում այդ ճաշարան-
ներն իրենց ներկայացնում են փոքրիկ տնայ-
նագործ ձեռնարկութիւններ ճաշ մաստակարա-
րող փոքրիկ ունակությամբ, վորի պատճառով
եւ նրանք անշահավետ են և հաճախ վնասաբեր:

Մի փոքր լավ ե հացագործութիւնը, Բայց
այս ճյուղն եւ պահանջում ե դեպի իրեն մեծ
ուշադրութիւն. Հացի գործարաններ հիմնելու
խնդիրն առանձնապէս սուր դրված ե այժմ,
յերբ յերկիրն ապրում ե հացի կրիզիս: Ըստ վո-
րում ալյուրը տնտեսելու նպատակով սպառող-
ների հիմնական մասսաներին ներկայումս փոխա-
նակ ալյուր տալու տալիս են թխած հաց:

Բանվորական կոոպերացիայի աշխատանքի
այս կարևոր ասպարեզի (հացագործության և
հասարակական սննդի) լայն զարգացման ճանա-
պարհին ցցված հիմնական խոչընդոտը հանդի-
սանում ե նրա վնասաբերութիւնը: Իսկ հասնել
այդ ձեռնարկութիւնների աշխատանքի շահա-
վետությանը, վորը և նրանց լայն զարգացման
գրավականն ե, հնարավոր ե միմիայն մեքենա-
յացված խոշոր հացի գործարաններ և ֆաբրիկա-
խոհանոցներ կառուցելով:

Բանվորական կոոպերացիայի անհրաժեշտ

կապիտալնի կառուցումների թվին պետք է դասել նաև լվացքարանների, կար ու կարկատանների արհեստանոցների կառուցումը: Այդ հիմնարկությունները բանվոր ընտանիքի բյուջեյի նկատմամբ ունեն խոշոր նշանակություն:

Վեր բանվորն իր անձնական փորձից չգիտե, թե վորքան թանկ է նստում իրեն մասնավոր տնայնագործների ծառայությունը:

Ընկեր Տոմսկին կոոպերատիվ համագումարներից մեկում բերեց հետևյալ որինակը. ռառաջ մեկ զույգ բատինկան արժեք 4 ռուբլի 50 կ., իսկ կարկատելը՝ մեկ ռուբլի, այժմ նոր բատինկան արժե 7 ռուբլի, իսկ կրունկն ու տակը նորոգելու համար վերցնում են 5 ռուբլի. ուստի հին բատինկաները չեն նորոգում, այլ դեն են գցում:

Սրա հետևանքը լինում է այն, վոր տուժում է վոչ միայն յուրաքանչյուր բանվորի բյուջեն, այլ և մեր ժողովրդական տնտեսությունը:

Մենք շարունակ ապրում ենք հում նյութի կրիզիս (պակասություն), իսկ այս դեպքում դեն է շարտվում ահագին հարստությունը:

Զեռք առած տնտեսական այս բոլոր միջոցների բուն նպատակը կայանում է նրանում, վոր սպառողի սպասարկումն է ժանախ, ամենորյա

պայքարի միջոցով դուրս շարտվի մասնավորը, սպառման գործը վերցվի նրանից, բանվոր ազգաբնակչության ապրուստի մակարդակը բարձրացվի, և նույնպես կադմակերպվեն զանազան տեսակի կենցաղային հիմնարկություններ, վորոնք և նպաստելույն կնոջն ազատվելու ընտանեկան կենցաղի ծանրությունից։ Այստեղ մենք ի նկատի ունենք մանկապարտեզները, մանկական հրապարակները, մսուրները և այլն։ Այս աշխատանքը կոոպերացիայում դրված է շատ թույլ և պատճառը դարձյալ միջոցների բացակայությունն է։ Մինչդեռ այս կարգի հիմնարկությունները կնոջ համար ունեն ահագին նշանակություն, ըստ վորում ազատում են նրան յերեխաներին խնամելուց ու այլ աշխատանքներից և հնարավորություն են տալիս մասնակցելու հասարակական աշխատանքներին։ Քիչ նշանակություն չունին այդ հիմնարկությունները նաև մատաղ սերնդի համար. ըստ վորում ոգնում են նրան տարիք առնել առողջ պայմաններում և արդեն մանուկ հասակից վարժվել ու կրթվել հասարակական կյանքի։

Կարճ խոսքով, սրանք են այն խնդիրները, վորոնք դրված են բանվորական կոոպերացիայի առաջ։ Ինչպես տեսնում եք, այդ բոլորը պահանջում են խոշոր միջոցներ։ Յեթե այս բոլորը

վերածենք թվերի, ապա կտեսնենք, վոր հնգամ-
յակի ընթացքում (1928—33 թ.) ապրանքային
շրջանառությունը զարգացնելու համար հարկա-
վոր ե գործադրել 600 միլիոն ուլբի, իսկ կա-
պիտալի ներդրումների համար՝ 300—350 մի-
լիոն. ընդամենն այսպիսով մեկ միլիարդից քիչ
պակաս:

Հարկավոր ե նորից ընդգծել, վոր այդ խո-
շոր գումարների գործադրումն առաջանում ե
բանվորական լայն մասսաների անհետաձգելի,
բուն կարիքներին բավարարելու անհրաժեշտու-
թյունից: Այժմ հարցը դրված ե այս կերպ. կամ
մենք, հանձն առնելով վորոշ զոհողություններ
և գործադրելով մեծ յեռանդ, կարող կլինենք
ձեռք բերել անհրաժեշտ միջոցները, և կամ
բանվորական կոոպերացիայի հետագա զարգա-
ցումը՝ բանվոր դասակարգի սպառողական կա-
րիքների լիակատար ընդգրկման և նրա սպա-
սարկման եժանացման ասպարիզում պետք ե
կանգ առնի: Իսկ սրա հետևանքը կլինի այն,
վոր մասնավորի դիրքերը շուկայում նորից կսմ-
բանան, իսկ բանվոր դասակարգի նյութական
դրությունը կվատթարանա:

Այժմ ամենահիմնական խնդիրը կայանում
ե հետևյալում. բանվորական կոոպերացիան իր
ունեցած ներկա միջոցներով կարող է արդյոք

հողալ պահանջվող գործադրումները և վճարներ են այն աղբյուրները, վորտեղից նա կարողանար ձեռք բերել պահանջվող միջոցները:

Վորպեսզի կարողանանք այս հարցին պատասխան տալ, մենք պետք է ծանոթանանք բանավորական կոոպերացիայի ֆինանսական դրության հետ:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Կոոպերացիան, վորպես հասարակական կազմակերպություն, վոր առաջին հերթում սպասարկում է իր անդամների պահանջներին ու կարիքներին, հիմնականում պետք է գործի նրանց միջոցներով: Այդպես եր մինչհեղափոխական կոոպերացիան Ռուսաստանում, այդպես է դրված գործը նաև արտասահմանյան կոոպերացիայում:

Ճիշտ է, կոոպերացիան արտասահմանում վաղուց է ինչ գոյություն ունի, նա կուտակել է արդեն խոշոր արժեքներ, բայց, աշխատելով կապիտալիստական պայմաններում, նա չի կարող հույս դնել բուրժվական կառավարությունների ոգնության վրա, ուստի նա առանձին ուշադրություն է դարձնում իր շրջանառության մեջ քաշել միջոցներ իր անդամներից:

Միջոցները կուտակվածն այս հիմնական աղբյուրին գուզընթաց, արտասահմանյան կոոպերացիայի մեկ աղբյուրն ել հանդիսանում է առևտրից գոյացած վաստակը:

Չէ վոր կոոպերացիան արտասահմանում նպատակ չունի դրած՝ բանվորության աշխատավարձի չափը բարձրացնելու նպատակով եժանացնել ապրանքների գինը: Նա վաճառում է շուկայի միջին գներով, այսինքն՝ կապիտալիստական շուկայի գներով, ուստի նա հնարավորությունն ունի ստանալ մեծ վաստակ:

Բոլորովին այլ է մեզանում: Մեր կոոպերացիան համեմատաբար յերիտասարդ կազմակերպությունն է: Մինչև հեղափոխությունը նա առանձին արժեքներ կուտակած չուներ, իսկ այն, ինչ ել վոր ուներ, կորավ ու ավերվեց իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմի տարիներում: Յեյ, վորովհետև մեզանում բուրժուական իշխանությունը տապալվել է և հաստատվել խորհրդային իշխանություն, վորը կոոպերացիայի վրա դրել է պարտականություն՝ բարձրացնելու բանվորական մասսաների կենցաղի մակարդակը և քաշելու նրան քայքայված տնտեսության վերակառուցման աշխատանքների մեջ, ուստի մեր իշխանությունը կոոպերացիային հասցնում է ամեն տեսակ աջակցություն:

Խորհրդային իշխանությունը պաշտպանում
 է մեր կոոպերացիան նրա համար, վոր այժմ,
 պրոլետարական դիկտատուրայի պայմաններում,
 կոոպերացիան սոցիալիզմի կառուցման գործում
 ձեռք է բերում բացառիկ նշանակություն։ Ըն-
 կեր Լենինն իր «Կոոպերացիայի մասին» հոդ-
 վածում նշել է. «Բնակչությունը մաքսիմալ
 չափով կոոպերացնելու դեպքում, ինքն ըստ
 ինքյան նպատակին է հասնում այն սոցիալիզմը,
 վորն առաջ ժպիտ ու ծաղր էր հարուցանում
 և արհամարանքի յեր արժանանում այն մարդ-
 կանց կողմից, վորոնք համոզված էին դասա-
 կարգային կռվի, քաղաքական իշխանությունը
 նվաճելու կռվի և այլն անհրաժեշտության մեջ»։
 Յեվ ապա՝ «Յեվ իսկապես, արտադրության բո-
 լոր միջոցները գտնվում են պետության իշխա-
 նության տակ, պետության իշխանությունը
 գտնվում է պրոլետարիատի ձեռքում, այդ պրո-
 լետարիատը միացած է բազմամիլիոն մանր ու
 մանրագույն գյուղացիության հետ, ապահով-
 ված է պրոլետարիատի ղեկավարությունը գյու-
 ղացիության նկատմամբ և այլն,—միթե այդ
 չի բոլորը, ինչ վոր հարկավոր է սպասել կո-
 ոպերացիայից, հենց միմիայն կոոպերացիայից,
 վորին առաջ աչքաթող էլինք անում վորպես
 չարհիություն և վորոշ տեսակետից, հենց ներ-

58/9 A 4285
կայումս ել, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում իրավունք ունենք աչքաթող անելու նույնպես: Միթե այս չե այն բոլոր անհրաժեշտությունը, վոր հարկավոր ե սոցիալիստական լիակատար հասարակություն կառուցելու համար: Այս դեռևս սոցիալիստական հասարակություն կառուցում չե, բայց այս անհրաժեշտ ու բավարար պայմանն ե այդ կառուցման համար»:

Յեվ ահա թե ինչու ընկեր Լենինը նույն այդ հոգևածում նույնպես նշեց. «պետք ե կոոպերացիան քաղաքականապես աշխարհի պայմանների մեջ դնել, վոր նա վոչ միայն մշտապես ու ընդհանրապես ունենա արտոնություններ, այլ և վոր այդ արտոնությունները լինեն նյութական (բանկային 0% բարձրություն և ալլն): Պետք ե կոոպերացիան վարկավորել պետական աշխարհի միջոցներով, վորոնք, յեթե վոչ մեծ չափով, համենայն դեպս գերազանցեյին այն վարկերից, վոր մենք տալիս ենք մասնավոր ձեռնարկատերերին, վորոնց թվում նաև խոշոր արդյունաբերություն և այլն»:

Այդ բոլոր տարիներում մեր կոոպերացիան մինչև այժմ ել պետությունից ստանում ե վորպես վարկ խոշոր դրամական միջոցներ, նույնպես վարկեր՝ ապրանքներով պետական արդյու-

նաբերությունից, կարելի չե տեսի, վոր այդ տարիներում մեր կոոպերացիան գործում եր հիմնականում պետական միջոցներով:

Շնորհիվ կառավարության կողմից ցույց տված այդ աջակցության, մեր կոոպերացիան հսկայական քայլերով առաջ ե գնում, և այժմ արդեն հանդիսանում ե արդյունաբերական ապրանքների բաշխման հիմնական խողովակը:

Սակայն բանվորական կոոպերացիայի այդ աճումն ընթացել ե գլխավորապես փոխառումի- ջոցներով և վոչ փայատերերի միջոցներով, ի հարկե, այդ ժամանակամիջոցում բավականա- չափ աճեց փայատերերի միջոցները կոոպե- րացիայում: Բանվորական կոոպերացիան, ինչ- պես և այլ տնտեսական կազմակերպություննե- րը, տարեց-տարի ստացան վորոշ վաստակ: Այդ բոլորը մեծացրին նրա սեփական միջոցները, բայց կոոպերացիայի սեփական միջոցների աճումը մինչև այժմ ել շատ հետ ե մնացել նրա տնտեսական գործունեյության աճումից:

Վերջին տարիներում, մի շարք պատճառ- ների հետևանքով, վորոնց մասին կխոսենք մի փոքր հետո, բանվորական կոոպերացիայի ֆի- նանսական դրությունը բավականաչափ վատա- ցավ:

Շատ բանկոռպներ հարկադրվեցին մեծ

դումարներ ծախսել գույքերի վրա (խանութների կառուցում, նոր խանութների սարքավորում և այլն). այս բոլորը ավելի ևս կրճատեց բանկոռայների առևտրական շրջանառության մեջ յեղող սեփական միջոցները և ընդարձակեց ոտար միջոցների դերը շրջանառության մեջ:

Առ 1-ն հոկտեմբերի 1926 թվի բանվորական կոոպերացիայի շրջանառության մեջ յեղող սեփական 1 ուրբլուն գալիս եր 3 ո. 98 կ. ոտար միջոց: Առ 1-ն հոկտեմբերի 1927 թվի դրությունը բավականաչափ վատացավ. սեփական 1 ուրբլուն գալիս եր արդեն 5 ո. 94 կ. ոտար միջոց: Առ 1-ն հոկտեմբերի 1928 թվի դրությունը փոխվեց. սեփական 1 ուրբլուն գալիս եր 4 ո. 55 կ. ոտար: Ճիշտ է, դրությունը մի փոքր լավացավ, բայց և այնպես չհասավ այն դրությանը, վոր գոյություն ունեւր 1926 թվի հոկտեմբերի 1-ին:

Բանվորական կոոպերացիայի ֆինանսական դրությունն առանձնապես վատանալու յե հետադալում: Համաձայն սպառկոոպերացիայի ստուգիչ թվերի, 1929 թվի սկզբում բանվորական կոոպերացիան շրջանառության մեջ ունեւնալու յե սեփական 1 ուրբլու դիմաց 8 ուրբլի ոտար միջոց:

Այս դրությունը յերկար շարունակվել չի

կարող, կառավարութիւնն ինքը արդյունաբերութիւնն ինդուստրալիզացման յենթարկելու և գյուղատնտեսութիւնը վերակառուցելու համար կարիք ունի մեծ միջոցների: Մեր կուսակցութեան XV համագումարն այս մասին արդեն տվել և հատուկ դիրեկտիվներ, — համագումարը դեմ արտահայտվեց պետական միջոցները կոոպերացիայի շրջանառութիւնից իսպառ դուրս տանելու առաջարկին, բայց միաժամանակ ընդգծեց յերկրի ինդուստրալիզացման բացառիկ կարևորութիւնը, վորը պահանջում և «միջոցների այնպիսի բաշխում, վորով այդ միջոցների հնարավոր մեծ մասը դրվեր արտադրութեան մեջ, իսկ հնարավոր փոքր մասը քնքրանքատար ցանցի մեջ»: Այդ թվում ինքընըստինքյան հասկացվում և նաև կոոպերացիան:

Այսպիսով կոոպերացիան հետադաշոււմ իր շրջանառութիւնից հետզհետե պիտի ազատի պետական միջոցները:

Յուրաքանչյուր փայտեր պետք և մտածի գտնել այնպիսի միջոցներ, վորոնք հնարավորութիւն տալին բանվորական կոոպերացիային նախ՝ ազատել պետական միջոցները և ապա՝ անհիվանդադին կերպով առաջ տանել իր հետադադարգացումը:

Ամենից առաջ տեսնենք վերջին տարիներում բանվորական կոոպերացիան ինչպիսի կուտակումներ ե ունեցել:

Ձեռքի տակ ունեցած տվյալները ցույց են տալիս ստացած վաստակի հետևյալ պատկերը (1000 ռուբլիներով).

	1924-25 թ.	1925-26 թ.	1926-27 թ.	1927-28 թ.
Գումարը	6.163	42.902	10.297	41.000
0/0 0/0 շրջանառ.	0.50	2 41	0 56	1.20
նկատմամբ				

Ինչպես ցույց են տալիս այս թվերը, ստացած վաստակը հափազանց փոքր է: Բացառություն ե կազմում 1925—26 թիվը, յերբ ստացվել ե ամենամեծ վաստակը: Բայց այդպիսի մեծ վաստակի պատճառով բանվորական կոոպերացիան կուսակցության և բանվորական լայն հասարակայնության կողմից պարսավանքի յենթարկվեց և մեծ վաստակի քաղաքականությունը մերժվեց: Մեր կոոպերացիան չի կարող մինչ հեղափոխական կամ արտասահմանյան կոոպերացիայի որինակին հետևելով ապրանքը վաճառել շուկայի գներով և հետամուտ լինել մեծ վաստակներին: Ձե՞ վոր կոոպերացիայի բարձր գներից կախված ե, նախ և առաջ, աշխատավարձի իրական մակարդակը: Յուրաքանչյուր բանվոր արդեն հասկանում ե, վոր իր ապրուստի մակարդակի համար եյական տարբերություն

չկա հիմնական միջերժների գների իջեցման և աշխատավարձի դրամական բարձրացման մեջ։ Նրանք այս բանում համոզվում են փորձով։ Ըստ վորում վորքան բարձր են մանրածախ գները, նույնքան ցածր ե տվյալ աշխատավարձի չափի իրական նշանակությունը։ Բարձր գներն առ վոչինչ են դարձնում այն ոգաւոր, վոր բան-վորն ստանում ե յուրաքանչյուր տարվա աշխատավարձի աճումով։ Ահա թե ինչու բարձր վաստակի քաղաքականությունը, դրա հետ միասին գների բարձրացումը, վոր գոյություն ունեյին 1925—26 թվին, կոոպերացիայի կողմից դեն շարտվեցին դեռևս անցյալ տարի։ ՀԿ(բ)Կ ԿԿ փետրվարյան պլենումի և Աշխատանքի ու Պաշտպանության խորհրդի՝ գների 10% -ային իջեցման վերաբերյալ վորոշումն սկիզբ դրեց սպառողի սպասարկման եժանության և գների հետևողական իջեցման քաղաքականությանը։ Գների իջեցման այս աշխատանքի արդյունքը շոշափելի կերպով արտահայտվեց ունյալ աշխատավարձի և, հետևապես, բանվորական մասսաների ապրուստի նկատմամբ։

Յեվ ահա այժմ, յերբ բանվորական կոոպերացիան միջոցների մեծ կարիք ունի, կարող ե, արդյոք, բռնել մեծ վաստակների քաղաքականության կողմը։ Ի հարկե, վոչ։ Ըստ վո-

ըսում այս կապված ե գների բարձրացման հետ, վորը և կառաջացնի բանվորական մասսաների ձեռք բերած ապրուստի մակարդակի իջեցումը:

Սրան զուգնթաց, հաշվի առնելով մեր կոոպերացիայի վաստակը, անհրաժեշտ ե չմոռանալ և այն, վոր այդ միջոցների նշանավոր մի մասն ել պարտադիր կերպով պետք ե յենթարկվեն հատկացումների. որինակ, $10^0/0$ վճարվելու յե յեկամտային հարկին, $10^0/0$ ՝ յերկարատև և վարկ սվորման ֆոնդին, $10^0/0$ ՝ պահեստի դրամագլխին, $10^0/0$ ՝ բանվորների և ծառայողների կենցաղի բարելավման ֆոնդին:

Այդ բոլոր հատկացումներից հետո բանկոոպներին մնում ե չափազանց համեստ կուտակում:

1928 — 29 տնտեսական տարում բանվորական կոոպերատիվների վաստակն ավելի ևս պակասելու յե, ամենից առաջ իհաշիվ արհեստակցական տուրքի բարձրացման և ի հաշիվ ծախսերի ավելացման, վոր լինելու յե սպառողի սպասարկման վորակը բարելավելու համար ձեռք առնվելիք անհրաժեշտ միջոցների հետևանքով: Այսպիսով կոոպերացիայի սեփական միջոցների կուտակման այս աղբյուրը կըճատվելու յե և ի հաշիվ դրա անկարելի յե իրականացնել դրված խնդիրները: Միակ միջոցը, վոր կարող

ե բանվորական կոոպերացիային հնարավորութ-
յուն տալ ունենալու առողջ, ամուր ֆինանսա-
կան բազա, դա կոոպերացված բնակչության
միջոցների ներս գրավումն է, ներսգրավումն
գոյություն ունեցող փայավճարային սիստեմա-
յի փոփոխության և փայատերերի զանազան ա-
վանդների մուծման ճանապարհով:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆ ՊԵՏՔ Ե ԱՇԽԱՏԻ ՍԵՓԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Նախ քան այս հարցի լուսաբանությանն
անցնելը, մենք համառոտ կերպով կանգ կառ-
նենք այն պրակտիկայի վրա, վոր գոյություն
ունի արտասանմանի կոոպերացիայում:

Մեր կոոպերատիվ պատվիրակության նա-
խագահ ընկեր Բալուտինը, 1928 թվին այցելելով
Գերմանիա, իր նորերս լույս տեսած «Մանրա-
վաճառ առևտրի կազմակերպումն ու տեխնիկան
Գերմանիայում» գրքի մեջ, բերում է հետևյալ
տվյալները: 1926 թվին գերմանական կենտրո-
նական Միության ցանցի 1.090 ընկերություն-
ների սեփական միջոցները հասնում էին 65
միլիոն մարկի, վորի 30 միլիոնը կազմում էր
անդամների մուծած փայադրամագլուխը: Այս-
պիսով փայադրամագլուխն այստեղ կազմում է
սեփական միջոցների համարյա կեսը: Սակայն

մեկ անգամի միջին փայլը Գերմանիայում համարյա հավասար ե մեր յերկրի միջին փայլին։ Միջին փայլը գերմանական կոոպերացիայում 1927 թ. մայիսի 1-ին կազմում եր 13,77 մարկ, կամ մեր փողով՝ 6 ռ. 50 կ., իսկ մեզ մոտ այդ նույն միջոցին կազմում եր 6 ռ. 54 կ.։ Այս բացատրվում ե այն մեծ դերով, վոր փայտա-տերի ավանդները խաղում են գերմանական կո-ոպերացիայում։ Ընկեր Բալտիսի նույն զբից իմանում ենք, վոր գերմանական կոոպերացիա-յում փայտա-տերի ավանդները $2\frac{1}{2}$ անգամ ա-վելի յեն նրա միջին ամսական շրջանառությու-նից և 5 անգամ գերազանցում են փայտա-մագլխից. իսկ միջոցները, վոր մուծված են փայտա-տերի կողմից վորպես փայտավճար ու ավանդներ, կազմում են 236 միլիոն մարկ, վորը համարյա հավասար ե այդ կոոպերա-տիվների մեկ յեռամսյակի շրջանառությանը. դրանց յեռամսյա շրջանառությունը հասնում ե 240 միլիոն մարկի։ Սրանից յերևում ե, վոր հիմնական միջոցները գերմանական կոոպերա-ցիայում պատկանում են փայտա-տերին, իսկ փոխառու միջոցները կազմում են տնտեսու-թյան մեջ գտնվող բոլոր միջոցների միմիայն $25\frac{0}{100}$ ։ Մինչդեռ մեր բանվորական կոոպերա-տիվներում տեղի ունի հակառակը, այստեղ սե-

փական միջոցներ կազմում են միմիայն $25^0/0$,
իսկ փոխառու միջոցները՝ $75^0/0$ ։

Մեզ մոտ, բանվորական կոոպերատիվներում, ավանդների խնդիրը դրված է շատ թույլ, առ 1 հոկտեմբերի 1927 թվի ավանդները բանվորական և քաղաքային կոոպերացիայում կազմում եյին ընդամենը $2^{1/2}$ միլիոն ռուբլի և $1^{1/2}^0/0$ բոլոր միջոցների, իսկ շրջանառության գումարի՝ $1^0/0$ -ից պակաս։

Ամենից առաջ մեր բանվորությունը զուրկ է խնայողություն ունենալու հմտությունից։ Այն ժամանակ, յերբ գերմանական բանվորը ամեն ամիս խնայում է իր ծախսի $1-2^0/0$ ը, և մոռնում է կոոպերատիվը վորպես ավանդ, այդպիսի խնայողություն մեր բանվորների մոտ լինում են վորպես պատահականություն։

Ճիշտ է, գերմանական բանվորը հարկադրված է շարունակ մտածել «սև որվա» համար։ Գործազրկությունը, հիվանդությունը, — նրան այս բոլորը զբաղեցնում են, և բուրժվական կառավարությունը նրան ոգնության չի հասնում։ Յեվ այս հարկադրում է նրան իր բյուջեն կառուցել «տնտեսության ռեժիմի» հիմունքների վրա։

Յեվ յեթե գերմանական բանվորը, չնայած իր չնչին աշխատավարձին, անում է խնայողու-

թյուն, ապա մեր բանվորները, գտնվելով ամեն կողմից ավելի լավ վիճակի մեջ, քան գերմանականը, ունեն մեծ հնարավորություն խնայողություններ անելու:

Այդ խնայողությունները մեր բանվորներին հարկավոր են վոչ թե «սև որվա» համար, այլ բավարարելու աճող կուլտուրական պահանջներն ու կարիքները: Յեւ ավելի լավ կարելի չե սրան հասնել մեր պայմաններում, մտցնելով կոոպերատիվ ունեցած միջոցները իբրև ավանդներ:

Փայտերը պետք է մուծի կոոպերատիվ նույնպես նպատակավոր ավանդներ վորոշ ապրանքներ գնելու և հատուկ կենցաղային հիմնարկներ և ձեռնարկություններ կառուցելու համար: Այսպիսի որինակներ տեղի չեն ունեցել Ստալինգրադում, Սեվաստոպոլում, Ղրիմում:

Ավանդային գործի կարևոր բնագավառ հանդիսանում է միջոցների պահ տալու կազմակերպումը կոոպերատիվում, այն միջոցների, վոր նշանակված են բանվորների ու ծառայողների ընթացիկ կարիքների համար: Բանվորը կամ ծառայողը 2 շաբաթը մեկ աշխատավարձ ստանալով, մեկեն ծախսում է դրամի մի մասը: Իսկ մեծ մասը ծախսում է հետգհետե մի շաբաթ, շաբաթ ու կեսի ընթացքում: Այդպիսով

բաժականին գումարներ քնում են սպառողի քսակում, մինչդեռ այդ գումարները մեծ ոգու-
տով կարող են ոգտագործվել կոոպերատիվի
շրջանառության մեջ:

Այս բանից բանվորը նույնպես շահվելու
յե: Այդ ավանդներից նա կստանա տոկոսներ,
իսկ կոոպերատիվը, իր տնտեսության մեջ ու-
նենալով խոշոր գումարներ, կարող կլինի սպա-
սարկումը դնել և լավ և եժան պայմանների մեջ:

Սրան գողընթաց փայտերերը պետք է
բացառիկ ուշադրություն հատկացնեն փայա-
վճարների գանձման խնդրին:

Վերը ցույց տվինք, վոր բանվորական կո-
ոպերացիայի տնտեսական գործունեյության մեջ
կոոպերատիվ սեփական միջոցները շատ փոքր
չափով են մասնակցում: Յեվ այս բոլորի պատ-
ճառն այն է, վոր վոչ միայն բանվորական կո-
ոպերատիվներում վաստակը փոքր է և ավանդ-
ների գործը կադմակերպված չե, այլ և այն,
վոր մեզանում անդամներից փայավճարները
թույլ չափով են գանձվում:

Բանվորա-քաղաքային կոոպերացիայում
գանձված վողջ փայադրամագլուխը հետևյալ
պատկերն է կրում (միլիոն ռուբլիներով):

	1/X 1924 թ.	1/X 1925 թ.	1/X 1926 թ.	1/X 1927 թ.	1/X 1928 թ.
Ընդհանուր					
գումարը	7.3	14.0	21.2	32.9	74.4
Մեկ անդ.					
միջ. փայլը	2.44	3.82	4.78	6.05	9.88

Ինչպես այս թվերը ցույց են տալիս, վերջին տարում բանվորական կոոպերացիան այս խնդրում հասել է մեծ հետևանքների, սակայն պետք է ի նկատի ունենալ, վոր շատ ավելի մեծ գումար, քան բոլոր փայավճարային միջոցները միասին վերցրած, գտնվում են գույքի մեջ (կառուցումներ, ինվենտար, գումակ) և բոլորովին չի մասնակցում ապրանքային շրջանառության մեջ:

Պետք է նկատել նույնպես, վոր վողջ փայադշամագլուխը բանվորական կոոպերացիայում այժմ կազմում է բոլոր սեփական միջոցների միմիայն մեկ յերրորդական մասը. մինչդեռ գերմանական կոոպերատիվներում կազմում է կեսը: Յեվ յեթե հաշվի առնենք, թե բանվորական կոոպերատիվներին ինչպիսի միջոցներ են հարկավոր, վորպեսզի կարողանա սպասարկել փայատերերի ընթացիկ պահանջները, ապա կստանանք հետևյալ պատկերը:

Բանվորների և ծառայողների միջին աշ-

խատավարձը մեղանում 1928 թվին կազմում
եր 686 ուրլի, համաձայն բանվոր ընտանիքի
ծախսերի (բյուջեյի) գիտական հետադոտու-
թյան. այդ ծախսերի 80⁰/₀-ը կամ 549 ուրլին
կազմում է բյուջեյի այն մասը, վոր գործա-
դրվում է սպառողական կարիքների վրա և մեծ
մասամբ ծախսվում է կոոպերատիվում: Համա-
ձայն ունեցած տվյալների, բանվորա-քաղաքա-
յին կոոպերացիան 1928 թվին ընդգրկել է բան-
վոր ընտանիքի սպառողական կարիքների վրա
ծախսվածի 62⁰/₀-ը կամ 340 ուրլին:

Բոլոր միջոցները բանվորական կոոպերա-
տիվներում տարվա մեջ շրջանառություն են
կատարում 5.6 անգամ, վորպեսզի կոոպերա-
տիվը կարողանա փայտերին հայթայթել 340
ուրլիու ապրանք, պետք է ունենա շրջանա-
ռու միջոց 61 ուրլիու հափով (340:5.6): Իսկ
փայտերը մուծել է ընդամենը 10 ուրլի:
Այսպիսով կոոպերացիան յուրաքանչյուր փայա-
տիբոջ սպասարկելու համար ավելացրել է միջին
հաշվով 51 ուրլի:

Բայց ի՞նչով է բացատրվում այս բոլորը:
Ձիցե թե անդամների փայավճարային այսպիսի
թույլ մասնակցության պատճառն այն է, վոր
փայտերը կոոպերատիվի աշխատանքի մեջ չի
գտնում նյութական շահագրգռություն: Հագիվ

թե այդ ե պատճառը: Չէ՞ վոր մեր կոոպե-
րացիան հանդիսանում ե պայքարի միջոցներից
մեկը հանդեպ հին կապիտալիստական կարգերի
մնացորդների: Պայքարելով մասնավոր առևտրի
դեմ, նա բարձրանում ե բանվորական մաս-
սաների ապրուստի մակարդակը և վերջապես,
տանում ե մեծ աշխատանք վերակառուցելու
մեր կենցաղը կուլտուրական նոր հիմունքնե-
րով:

Այս բոլորը, այսպես ասած, բանվոր դա-
սակարգի նյութական շահագրգռման միջոցներն
են: Բայց սրա հետ միասին կոոպերատիվի յու-
րաքանչյուր փայտտեղ անձամբ ոգտվում ե մի
շարք արտոնություններից ու առավելություն-
ներից, վորից զուրկ ե մնացած բնակչությունը:
Փայտտեղին բաց են թողնում չբավարարող ապ-
րանքները առաջին հերթին, նա ստանում ե մանր
և յերկարատև վարկ. վարկ կոոպերատիվի ճա-
շերի և ճաշարանի համար:

Այդպիսով նյութական շահագրգռության
միջոցների պակասություն չի նկատվում: Ապա
ինչո՞վ բացատրել փայադրամագլուխների ցած
մակարդակը կոոպերացիայում:

Պետք ե ընդունել, վոր սրա պատճառը
թափնված ե փայի սխտեմայի մեջ: Մինչև
այժմ ել բանվորական կոոպերացիայում ինք-

նուրույն աշխատավարձ ստացող բոլոր անդամ-
 ների համար փայավճարի չափը նույնն է: Սա-
 կայն արդարացի՝ յե արդյոք այս բանը: 20—25
 ուրբի աշխատավարձ ստացող բանվորը մուծում
 է այնքան փայավճար, վորքան վոր մուծում է
 100—150 ուրբի ստացող բանվորը: Միթե ար-
 դարացի յե, յերբ խորհրդային հիմնարկության
 ստորին պաշտոնյան—ցրիչը—վճարում է ամսա-
 կան 200 ուրբուց ավելի ստացող մասնագե-
 տին հավասար—15 ուրբի փայ: Չե՞ վոր փա-
 յատերը վորքան մեծ աշխատավարձ ստանա,
 այնքան ել շատ գնումներ կկատարի կոոպերա-
 տիվում, և հետևապես այնքան ել շատ է ոգ-
 տվում կոոպերատիվի ծառայություններից: Յեվ
 անա այս հանգամանքն անտեսված է գոյու-
 թյուն ունեցող փայավճարային սիստեմայում:
 Բանից դուրս է դալիս, վոր փայատերերի ավե-
 լի անապահով շերտերը փայավճարային ավելի
 մեծ ծանրություն են կրում իրենց ուսերի վրա,
 քան ապահովված շերտերը:

Գոյություն ունեցող փայավճարային սիս-
 տեմայի հիմնական ու իսկական բացը հանդի-
 սանում է և այն, վոր փայավճարի չափը չի
 ունեցել իր հիմքում վորևե հաշիվ: Նա հաշվի
 չի առել կոոպերատիվի անդամներին ցույց տված
 ծառայության արժեքը, հաշվի չի առել նույն-

պես կոոպերատիվի կարիքը միջոցների նկատ-
մամբ: Փայատերը նույնպես չի իմացել, թե
ինչու իրենից վերցնում են 15 ռուբլի, և վոչ
10 կամ 20:

Այժմ փայակուտակման հարցը գրավել է
իր վրա կոոպերատիվ բոլոր կազմակերպություն-
ների, կոոպերատիվ ակտիվի լայն մասսաների
և փայատերերի ուշադրությունը:

Բանվորական կոոպերացիան պետք է սկսի
հետզհետե առևտուր անել սեփական միջոցնե-
րով: այդ միջոցների հիմքը պետք է կազմեն
փայավճարները: Իսկ փայավճարների չափն ամ-
բողջապես կախված է այն բանից, թե կոոպե-
րատիվը միջոցների ինչպիսի կարիք ունի: Ա-
ռավելապես սեփական միջոցներով տարված աշ-
խատանքը կոոպերատիվին հնարավորություն
կտա բավականաչափ կրճատելու ոտար միջոց-
ների տոկոսային ծախքերը, իսկ այս, անշուշտ,
կտա դրական հետևանք փայատերերի շահագրը-
գընությունը բարձրացնելու և կոոպերատիվի
աշխատանքը կանոնավորելու խնդրում: Վճռա-
կան կերպով կարելի չէ ասել, վոր միմիայն այս
պայմաններում — յերբ կոոպերացիան կսկսի աշ-
խատել կոոպերացված բնակչության միջոցով —
փայատերը կզգա իրեն վորպես կոոպերատիվի
լիակատար տեր: Կոոպերացիայի անդամների

փայլավճարների անհրաժեշտ չափով բարձրացնելու հարցի լուծումով, ինքնըստինքյան ծագելու յե գոյություն ունեցող սիստեմայի փոփոխության խնդիրը. փոփոխություն այն հաշվով, վորպեսզի վորոշ ժամանակամիջոցում գանձվի փայլավճարային միջոցների հնարավոր առավելագույն գումարը: Այս բոլոր պահանջներին, մեր կարծիքով, պատասխանելու յե դիֆերենցիալ փայլի նոր նախագիծը, վորի ելությունը կայանում ե նրանում, վոր, փոխանակ բոլոր անդամների համար գոյություն ունեցող միանման փայլավճարի, սահմանվի առանձին խմբակների համար փայլերի տարբեր չափ, համապատասխան աշխատավարձի չափերի:

Փայլավճարային այս սիստեմի կիրառումով վերջ կտրվի մինչև այժմ գոյություն ունեցող անարդարությանը, վոր կայանում ե բոլորի համար, անկախ աշխատավարձից, միանման փայլավճար սահմանելու մեջ, հնարավորություն կտրվի բանվորական կոոպերատիվներին գանձելու մեծ միջոցներ և իրենց վողջ աշխատանքը դնել ու սեփական միջոցներից գոյացած ֆինանսական ամուր հիմքերի վրա:

Այս ճանապարհով հետզհետե պիտի ազատվեն կոոպերատիվ շրջանառությունից պետական միջոցները, վորոնք այժմ խիստ անհրաժեշտ են

մեր սոցիալիստական շինարարութեան այլ ճյուղերի համար, և առաջին հերթին՝ խոշոր արդյունաբերութեան զարգացման ու գյուղատնտեսութեան կոլլեկտիվացման համար:

Յ Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Այն չափով ինչ չափով վոր հնարավոր եր արտահայտվել այս գրքույկի շրջանակներում, մենք նշեցինք այն կարիքները, վորոնց համար բանվորական կոոպերացիան պետք ե ունենա միջոցներ, և այն հեռանկարները վոր, կան այդ կարիքներին բավարարելու նկատմամբ:

Սրանից յուրաքանչյուր կոոպերատիվ աշտիվիստ և յուրաքանչյուր փայատեր կտեսնի վոր միակ միջոցը, վորով կարելի յե բանվորական կոոպերացիայի ֆինանսներն ամրապնդել, հանդիսանում ե կոոպերացված բնակչութեան միջոցների մոբիլիզացիան:

Մինչև այժմ բանվորական կոոպերացիան այս խնդրում, ընդհանրապես, աշխատել ե թույլ, անսխստեմ, պատահական կերպով. ավելին, — մինչև այժմ նա հարց չի բարձրացրել փայատերերի առաջ այն անհրաժեշտութեան մասին, վոր, վերջիվերջո, խորհրդային պայմաններում պետք ե անցնել իսկական կոոպերատիվ ուղիի վրա. այսինքն՝ աշխատել ամբողջովին կոոպերատիվ սեփական միջոցներով:

Այժմ այս բոլոր հարցերը հերթի յե դրել
կենքը կյանքը, Յուրաքանչյուր փայատեր և կո-
ոպերատիվ վողջ ակտիվը պետք է ըմբռնեն այս
հարցերը և իրագործեն կյանքի մեջ:

Փայատերերի ուշադրությունը պետք է
կենտրոնանա այս հարցերի վրա հաշվետու-նախ-
ընտրական կաժպանիայի ընթացքում, յերբ հրա-
պարակ են բերվում բանկոոպների աշխատանքի
հետևանքները և նշվում են հետագա գործունե-
յության պլանը:

Յուրաքանչյուր կոոպերատիվ ակտիվիստ
պետք է ամեն տեղ փայատերերի լայն մաս-
սաների առաջ բացատրի այն մեծ խնդիրները,
վոր ցցված են բանվորական կոոպերացիայի ա-
ռաջ, նույնպես այն հերթական խնդիրները, վոր
բանվորական կոոպերատիվների կողմից դրված
են փայատերերի առաջ:

Թվերը ձեռքում հարկավոր է բանվորական
մասսաների առաջ բացատրել այն ոգուտները,
վոր կարող է կոոպերատիվը տալ, յեթե նրանք
(բանվորները) իրենց միջոցներով ամրացնեն
նրանց:


Առանձնապես պետք է բացատրել այն նվա-
ճումները, վորոնք կարող են տեղի ունենալ սո-
ցիալիստական շինարարության մեջ, յեթե կո-
ոպերացիայի շրջանառությունից ազատվեն պե-

տական միջոցները և գործադրվեն յերկրի ին-
դուստրալիզացման վրա:

Բնակչության միջոցները ներս բերելու աշ-
խատանքի ընթացքում, անշուշտ, առաջ կգան
դժվարություններ, տեղի կունենան դիմադրու-
թյուններ բանվորական առանձին շերտերի
կողմից, զրույցներ կլինեն՝ վոր փայավճարալին
այդ սխտեմը ծանր ե անդամների համար և
այլն: Ուստի բոլոր կոոպերատիվ ակտիվիստնե-
րը պետք ե հայտ բերեն իրենց վողջ յեռանդը և
ոգտագործեն բոլոր հնարավորությունները բան-
վորներին և փայատերերին բացատրելու համար
այդ միջոցների խոշոր նշանակությունը: Այս
աշխատանքը պետք ե դարձնել անկյունաքար:
Կոոպերացված բնակչության միջոցների մոբի-
լիզացիայի աշխատանքը և սրա բացատրությա-
նը հանդիսանալու յեն կոոպերատիվ ակտիվի և
նրա գործունեյության համար վորպես քննու-
թյուն բռնելու մի ակտ:


Սրան զուգընթաց անհրաժեշտ ե կոոպերա-
տիվ լուսավորության աշխատանքը դնել այն-
պես, վոր յուրաքանչյուր ֆաբրիկա, յուրա-
քանչյուր համքյար, ակումբ, բանվորական յու-
րաքանչյուր ժողով, յուրաքանչյուր խանութ հի-
շեր և կոչ աներ փայատերերին իրագործելու
այս միջոցները, վորոնք ոգնելու յեն կոոպե-

րացիային շարունակելու պայքարը մասնավոր
 ներքի դեմ՝ ավելի լավ ու ավելի եժան սպա-
 սարկելու համար սպառողին, բարձրացնելու հա-
 մար բանվորական մասսաների ապրուստը և
 կուլտուր-կենցաղային մակարդակը:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ի՞նչու բանվորական կոոպերացիային հար- կավոր են մեծ միջոցներ	3
Բանվորական կոոպերացիայի միջոցները և նրանց աղբյուրները	14
Բանվորական կոոպերացիան պետք է աշ- խատի սեփական միջոցներով	24
Յեզրակացութիւն	35



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039166

[084]

410 5 400.

A $\frac{I}{4285}$

